

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:

2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ոռուերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն): 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագրին ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», «Резюме», “Summary” և նման նշումների:

3. Հայերենի համար օգտագործել AMM MairTeutak (unicode) տառատեսակը: Մուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), չափը՝ 12, սողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:

4. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.

ա. Գրերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (italic):

բ. Հոդվածների (և գրերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:

գ. Շարժերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:

դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:

ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ նաև նշել նամառուսումով:

գ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նույնի» և աշխատության տվյալները:

լ. Մրանց գումարվում է **ԲՄ**-ում ավանդական դարձած հեղինակի անունը թափ (bold), իսկ խմբագրի, կազմողի, բարգմանչի անունը թափ և շեղ (bold + italic) գրելու պահանջը:

Օրինակներ՝

Գալիք Անյաղը, Սահմանք իմաստասիրութեան, համահավաք բննական բնագիրը, բարգմանությունը գրաբարից ոռուերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Ռ. Արևշատյանի, Երևան, 1960, պրակտ ժկ., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (ՄՀ¹, ԺԵ. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437:

Philonis Alexandrini Quaestiones in Genesim et in Exodus. Fragmenta Graeca, ed. *F. Petit* (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978:

5. Հաճախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:

6. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանի):

Վճտկ. 456 (Վենետիկի Միսիրարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Միսիրարյան միաբանություն):

Փրզ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային Գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայֆեզում գետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits*, (Coulie – 2002),

<http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf>):

¹ = Մատենագիրք հայոց: Այլ համրանայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմաբանակրական համարես, ԲՄ = Բանքեր Մատենագրաւանի, ՀԱ = Հանդիս ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲԵՀ = Բանքեր Երևանի համալսարանի, REArm = Revue des Études Arméniennes: